ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՏԵՂ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՆԻՍՏԻ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2

28 ապրիլի 2020 թվականի գյուղ Տեղ

Մասնակցում էին Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղ համայնքի ավագանու 8 անդամներից՝

Սևադա Դանիելյանը
Մասիս Մկրտչյանը
Համեստ Հակոբյանը
Արգամ Լալայանը
Նարինե Ջհանգիրյանը
Սենիկ Փարսյանը

Բացակայում էին Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղ համայնքի ավագանու անդամներ՝

Արտակ Աղաջանյանը
Սիլվա Գալստյանը

Մասնակցում էր Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղ համայնքի ղեկավար՝ Ներսես Շադունցը:

Հրավիրված էին՝ Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղի համայնքապետարանի աշխատակազմի աշխատակիցներ, բնակավայրերի վարչական ղեկավարներ, համայնքի բնակիչներ:

Նիստը վարում է Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղ համայնքի ղեկավար՝ Ներսես Շադունցը:

Նիստի արձանագրումն ապահովում էր Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար՝ Արտակ Բաղդագյուլյանը:

Նիստն սկսվեց ժամը 14.00-ին:

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղ համայնքի **ավագանին.**

1. **Լսեց Նիստի օրակարգի մասին:** Նիստը վարող Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղ համայնքի ղեկավար՝ Ներսես Շադունցը ներկայացրեց նիստի օրակարգի նախագիծը և առաջարկեց հաստատել այն: Այլ առաջարկություններ չեղան:

Որոշեց (N 7)՝

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ և 16-րդ հոդվածներով, համաձայն Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղ համայնքի ղեկավարի առաջարկության, որոշման նախագծի կողմ-6, դեմ-0,

ձեռնպահ-0 քվեարկության արդյունքներով, Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղ համայնքի ավագանին **որոշում է.**

Հաստատել Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղ համայնքի ավագանու 2020 թվականի ապրիլի 28-ի նիստի հետևյալ օրակարգը.

1. **Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղ համայնքի 2020 թվականի բյուջեի առաջին եռամսյակի ընթացքի մասին:**
2. **Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղ համայնքի ավագանու նիստերի առցանց հեռարձակման ծրագրի համաֆինանսավորմանը համաձայնություն տալուև արտաբյուջետային հաշիվ բացելու մասին:**
3. **Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղ համայնքի Տեղ գյուղում գտնվող և որպես «անհայտ» քաղաքացիների սեփականություն փոխանցված հողատարածքը համայնքային սեփականություն ճանաչելու մասին:**
4. **Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղ համայնքի սեփականություն հանդիսացող Խոզնավար գյուղի 3-րդ փողոց թիվ 5 հասցեի ակումբի շենքից Վահան Զաքյանին վարձակալությամբ տարածք հատկացնելու մասին:**

(որոշման նախագծի քվեարկության արդյունքները. կողմ՝ 6, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0)

2. **Լսեց՝ Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղ համայնքի 2020 թվականի բյուջեի առաջին եռամսյակի ընթացքի մասին:**
(զեկուցող՝ Համայնքի ղեկավար՝ Ներսես Շադունց)

Որոշեց (N8)՝

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի առաջին մասին 6-րդ կետի դրույթներով, «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 3-րդ կետով, որոշման նախագծի կողմ-6, դեմ-0, ձեռնպահ-0 քվեարկության արդյունքներով, Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղ համայնքի ավագանին ***որոշում է***.

Ընդունել ի գիտություն Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղ համայնքի ղեկավարի հաղորդումը Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղ համայնքի բյուջեի 2020 թվականի առաջին եռամսյակի ընթացքի մասին՝ համաձայն բյուջեի կատարման վերաբերյալ հաշվետվության 1-6 հատվածների:

(որոշման նախագծի քվեարկության արդյունքները. կողմ՝ 6. դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0)

3. **Լսեց՝ Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղ համայնքի ավագանու նիստերի առցանց հեռարձակման ծրագրի համաֆինանսավորմանը համաձայնություն տալուև արտաբյուջետային հաշիվ բացելու մասին:**
(զեկուցող՝ Համայնքի ղեկավար՝ Ներսես Շադունց)

Որոշեց (N9)՝

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ և 6-րդ կետերով, 92-րդ հոդվածի 4-րդ մասով, 90-րդ հոդվածով, «Բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 29-րդ հոդվածով, որոշման նախագծի կողմ-6, դեմ-0, ձեռնպահ-0

քվեարկության արդյունքներով, Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղ համայնքի ավագանին ***որոշում է***.

1. Տալ համաձայնություն Եվրոպայի խորհրդի կողմից իրականացվող «Ժողովրդական զարգացում, ապակենտրոնացում և լավ կառավարում Հայաստանում» ծրագրի «Լավագույն գործելակերպի ծրագիր Հայաստանի խոշորացված համայնքների համար» հայտարարված դրամաշնորհային ծրագրի շրջանակներում ավագանու նիստերի ուղիղ առցանց հեռարձակման նպատակով ներկայացված ծրագրի համաֆինանսավորմանը 1795000/մեկ միլիոն յոթ հարյուր իննսունհինգ հազար/ ՀՀ դրամի չափով:
2. Համաֆինանսավորումը տրամադրել համայնքի 2020թվականի բյուջեի պահուստային ֆոնդից:
3. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղ համայնքին դրամաշնորհի կարգով տրամադրվող ֆինանսական միջոցները տեղադրել գանձապետարանում՝ բացելով արտաբյուջետային միջոցների հաշիվ:
4. Համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարին՝ ապահովել սույն որոշումից բխող գործառույթների իրականացումը:

(որոշման նախագծի քվեարկության արդյունքները. կողմ՝ 6, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0)

4. Լսեց՝ Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղ համայնքի Տեղ գյուղում գտնվող և որպես «անհայտ» քաղաքացիների սեփականություն փոխանցված հողատարածքը համայնքային սեփականություն ճանաչելու մասին:
(զեկուցող՝ Համայնքի ղեկավար՝ Ներսես Շադունց)

Որոշեց (N10)՝

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի 2010 թվականի հունիսի 1-ի «Կադաստրային հատակագծերում և քարտեզներում հայտնաբերված սխալների ուղղման հրահանգը հաստատելու մասին» N 186-Ն հրամանի 9-րդ կետի 5-րդ ենթակետով, հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը, որոշման նախագծի կողմ-6, դեմ-0 ձեռնպահ-0 քվեարկության արդյունքներով, Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղ համայնքի ավագանին **որոշում է.**

1. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղ համայնքի Տեղ գյուղում գտնվող 0,04978 հեկտար (կադաստրային ծածկագիր՝ 09-101-0043-0008) բնակավայրերի բնակելի կառուցապատման հողատարածքը՝ որպես «անհայտ» քաղաքացիների սեփականություն, որի նկատմամբ գոյություն չունի որևէ իրավունք հաստատող փաստաթուղթ՝ ճանաչել Տեղ համայնքի սեփականություն:
2. Համայնքի ղեկավարին՝ ապահովել սույն որոշումից բխող անհրաժեշտ գործառույթների իրականացումը:

(որոշման նախագծի քվեարկության արդյունքները. կողմ՝ 6, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0)

5. Լսեց՝ Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղ համայնքի սեփականություն հանդիսացող Խոզնավար գյուղի 3-րդ փողոց թիվ 5 հասցեի ակումբի շենքից Վահան Զաքյանին վարձակալությամբ տարածք հատկացնելու մասին:

(զեկուցող՝ Համայնքի ղեկավար՝ Ներսես Շադունց)

Որոշեց (N11)՝

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, հիմք ընդունելով Վահան Զաքյանի 2020 թվականի ապրիլի 14-ի թիվ 3/107 դիմումը և համայնքի ղեկավարի առաջարկությունը, որոշման նախագծի կողմ-6, դեմ-0, ձեռնպահ-0 քվեարկության արդյունքներով, Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղ համայնքի ավագանին **որոշում է.**

1. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղ համայնքի սեփականություն հանդիսացող Խոզնավար գյուղի 3-րդ փողոց թիվ 5 հասցեի ակումբի շենքի 1-ին հարկից (համաձայն սխեմայի) 18,8քմ ընդհանուր մակերեսով տարածք վարձակալությամբ տրամադրել Վահան Զաքյանին՝ 10 /տասը/ տարի ժամկետով:
2. Տարածքի վարաձակալության վճարի չափը 1 քմ-ի համար սահմանել տարեկան 1000 /մեկ հազար/ ՀՀ դրամ:
3. Համայնքի ղեկավարին՝ ապահովել սույն որոշումից բխող անհրաժեշտ գործառույթների իրականացումը:

(որոշման նախագծի քվեարկության արդյունքները. կողմ՝ 6, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0)

Օրակարգի բոլոր հարցերն սպառվեցին: Նիստն ավարտվեց ժամը 16.00-ին:

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի
Տեղ համայնքի ավագանու անդամներ՝

1 Սևադա Դանիելյան
2 Մասիս Մկրտչյան
3 Համեստ Հակոբյան
4 Արգամ Լալայան
5 Նարինե Ջհանգիրյան
6 Սենիկ Փարսյան

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի
Տեղ համայնքի ղեկավար՝ ***Ներսես Շադունց***